



## ՍՄԵՆԸՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔՄՐՈՁԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՋԱՓՄՈՒ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՆԻ ՍՌԹԻՎ

(21 ապրիլի 1957 թ.)

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն Մերոյ»:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԿ Ի ՄԵՌԵԼՈՅ»:

 մեն զարնան, երբ բնուրյունը ձմռան երկար ժումենն կզարքնու և երբ մեր հայրենի երկինքը կպայծառանա, երբ Արարատյան դաշտը կսկսի կանաչ հագճի և մեր սարերն ու ձորերը կզուգվին ալ ու ավան ծաղիկներով, Հայոց Եկեղեցին կույա մեր սրտերուն բերելու մեծ ավետիսը Քրիստոսի հարուրյան:

Եվ ինչպես կարծրացած նողը խստաշունչ ձմռեն վերջ ծարավը ունի զարնանային կենարար զերմուրյան, ինչպես երկինք և երկիր զիշերվան խավարեն հետո արևի հառազայրենով կլուսազարդվին, ինչպես ուղեկորուս նամրորդը փրկուրյան արանետը կդանե, կամ ինչպես անեղ մարտի մը վախճանին հաշտուրյան փողը կենչ փրկարար, այդպես կդիմավորեն բոլոր հավատացյալ նողիները՝ ավետիսը Քրիստոսի սուրբ հարուրյան:

Մեր աշխարհին զարուն է իշած այսօր, և Զատիկ է այսօր, սիրելի՛ հայ յողովուրք:

Եվ ահա մենք, բոլոր Քրիստոնյա Եկեղեցիներու հետ միասիրու ու միաբերուն, ցնծագին կավետենք՝ «ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԿ Ի ՄԵՌԵԼՈՅ, ՄԱՀՈՒԱՄԲ ԶՄՈԼՀ ԿՈԽԵԱՅ» եր ՅԱՐՈՒԹՅԱՆՄՐԸ ԽԻՐՈՎ, ՄԵԶ ԶԿԵԱՆՍ ՊԱՐԳԵՒԵԱՅ»:

Սիրելի՛ հավատացյալներ, ճշմարիտ և սուրբ հարուրյան այս ավետիսը Մենի կրերենք ձեզ այստեղեն, Ս. էջմիածնեն, որ աշխարհի հնագույն և ամենալավերական վկաներեն մին է հարուցյալ Քրիստոսի կենդանուրյան:

Յեցանեք և ուրախ եղեք, զի մենք այն ժողովուրդն ենք, որ ոչ միայն յսեցինք Քրիստոսի հարուրյան մասին, ոչ մրայն առաջիններեն եղանք, որ հավատացինք աշխարհասան այդ մեծ հրաշքին և մեր սրտերուն մեջ առինք Ս. Թուուն և Ս. Բարբողիմեն առայլաներու բերած Ավետարանը, այլ առանք նաև մեր նողիներով, թէ մեր աշխարհը իշակ ինքը՝ հարուցյալ և նավետ կենդանի Միածին Ուղին Աստուծո, Տեր և Փրկիչը մեր Հիսուս:

Մեր ժողովրդի հոգեկան աշխարհին մեջ, անգամ մը ևս «ԹԱՆՆ ՄԱՐՄԻՆ  
ԵՂԵՒ ԵՒ ԲՆԱԿԵԱՅ Ի ՄԵԶ»:

Հայ ժողովուրդը քրիստոնյա է մաճավանդ Քրիստոսի իշման խորհրդով  
ի Հայաստան աշխարհ:

Հայաստանյայց եկեղեցին եկեղեցի է՝ Ս. էջմիածնով:

Հայ եկեղեցին Քրիստոսի տիեզերական նշանառության՝ հայկական կեր-  
պով ընկալումն ու մարմնավորումն է՝ Ս. էջմիածնով:

Եկեղեցին Հայկական մերն է և միայն մերը, նույն և հավիտյան  
Ս. էջմիածնով:

Միաձեի իշման խորհուրդը, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, մեր ժո-  
ղովրդին շնորհված աստվածային սփանչելի մեկ վկայությունն է Քրիստոսի  
կենդանուրյան և հավերժուրյան:

Հայ ժողովրդի ոգեկան պատմական մեծ փորձն է այս՝ Քրիստոսի հա-  
րուրյան նշանառության և Անոր հավետ կենդանուրյան մասին: Այս ոգեկան  
փորձը, որ իր սկիզբը կառնել իշման խորհրդին, հայ ժողովրդի իրավ սփա-  
կանությունն է և անկե է, որ կրիսի մեջ համար մեծ նշանառությունը թե՝  
Աստված մեզ հետ է և մենք ալ՝ Աստուծո հետ:

Քրիստոսի հարուրյան նշանառության վեմերեն մին դրված է իշման այս  
Ս. Սեղանի հիմքերուն մեջ:

Այսպիսով, Ս էջմիածինը ոչ միայն հայ ժողովրդի, այլև համայն քրիս-  
տոնյա մարդկուրյան համար՝ հավատքի պատճեն կիանդիսանա երեկ, պաօր և  
հավիտյան:

Ո՞վ կրսէ, թե մեր Հավատամբը Քրիստոսի հարուրյան մասին, և հույսը  
մեր հոգիներու փրկուրյան, պայմանադրական նշանառություններ եղած են  
Հայոց աշխարհին մեջ:

Բնավ երբեք: Այդ հավատքը, այդ հույսը հայ ժողովրդի տիրական ապ-  
րումն է եղած, ու մեացած դարեւ շարունակ, մինչև այսօր: Այդ հավատքն  
ու այդ հույսն է, որ փորորկած են մեր հախնյաց բովանդակ էուրյունը և  
հանդիսացած՝ մեր ժողովրդի հոգին լուսավորող, կաղապարող ու կորողաց-  
նող երեղեն սուրբ զրուրյունը:

Լսեցեք Մամիկոնյան Քաջն Վարդակի պատգամը. «ԱՅՆ ՈՐ ԿԿԱՐՄԵՐ,  
ԹԵ ՄԵՆՔ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱԳՈՒՍՏԻ ՆՄԱՆ ԱՌԱԾ ԵՆՔ ՄԵՐ ՎՐԱ,  
ԱՅՖՄ ՀԱՍԿԱՎ, ԹԵ ԶԻ ԿՐԱՍՐ ՓՈԽԵԼ, ԶԱՅՆ, ԻՆՉՊԵՍ ԳՈՒՅՆԸ ՄԱՐՄՆԵՆ  
ՄԻՒԶԵՎ ԱՇԽԱՌՀԻ ՎԱԽԱՌԱՆԸ: ՎԱՅՆԶԻ ԱՆՈՐ ՀԻՄԵՐԸ ՀԱՍՏԱՏ ԴՐՎԱԾ ԵՆ  
ԱՆՇԱՐԺ ՎԵՄԻ ՎՐԱ, ՈՉ ԹԵ ԱՅՍՏԵՂ, ԱՅԼ ՎԵՐԸ ԵՐԿՆՔԻ ՄԵԶ»:

Մեր ամբողջ պատմության ընթացքին, Հայլյան հանճարի բոլոր որո-  
հումերուն և ստեղծագործություններուն մեջ, «վասն հաւատոց և վասն Հայ-  
րենեաց» մեր բոլոր մաքոռումներուն և ներուսամարտերուն մեջ՝ Ավարայրեն  
մինչև Սարդարապատ, միշտ եերկա եղած է անմիջառող կերպով ամենահաղը  
հարուցյալ Փրկիչը մեր Քրիստոս: Զի ՇՈՒՐ ՏԵՐ, ՕԳՆԱԿԱՆ ՄԵՐ ԵՍ, ՓԱՌՔ  
ՄԵՐ ԵՒ ԲԱՐՁՐԱՅՈՒՑԻՉ ԳԼԽՈՅ ՄԵՐՈՅ» (Սաղմ., Գ 4):

Այո՛, փոքր եեն համրանքով և աշխարհի վրա ցիրուցան, այո՛, ոսկի և  
բենեկ քիչ ուժինեն, չումիենք շինող ապարանքներ ու հարուստ զանձարաններ,  
այսօր մեր եկեղեցին արտաքնապիս անշուր բլազ կրվի և երեսն ներին  
դժվարություններու առաջ է կանգնած, սակայն այս բոլորն վեր, ամեն բանն  
ավելին ունինք մենք:

Մենք մեր հոգիներուն մեջ կկրենք աննվազելի զրուրյունը և անկորենչելի  
շնորհները Փրկչի իշման խորհրդին և նովիտենական լույսը փառաց՝ Լուս-  
պորչի կանքեղին, մեր սրբերուն մեջ միշտ վառ:

Մենք երբեք պիտի շմեռինք, մենք երբեք պիտի շտկարանանք, մենք  
երբեք պիտի չկորսակինք, բանզի իրավ հարյալ Քրիստոս և իրավ իշավ Միա-  
ծին Որդին ի դաշտն Արարատյան, և փառին լույսով լեցուց աշխարհն Հա-  
յաստան և պատմությունը հայոց:

«Եթէ քրիստոս զիցէ ՅԱՐՈՒՑԵԱԼ, ԸՆԴՈՒՆԱՅՆ է ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱԿԱՏՔՆ ԶԵՐ»—կողու մեծ առաքյալը Պողոս:

«Եթէ քրիստոս զիցէ ԻՇԵԱԼ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ՀԱԿԱՏՔՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ է ԵՒ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆՆ ԶԵՐ»,—պիտի ավելցներ հայ ժողովուրդը:

Բայց, ո՞վ Ազգ իմ սիրելի, ժողովուրդ հայոց, բնորունայն չէ քու հավատքը, բնորունայն չէ և մեր հարուրյունը, վասնի հարուցյալ կենդանի Քրիստոսը իրավ հայտնվեցավ այսեղ, մեր աշխարհին, Հայաստանյայց աշխարհին:

Ս. Էջմիածնի քրիստոսի ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒԹՅՈՒՆՆ է: Հսկեցեմ և արքուն կեցեմ, որ ձեր սրբերուն մեջ Քրիստոսը շնորհի և հարուրյան հույսը շմարի: Հսկեցեմ և արքուն կեցեմ, որ ձեր հոգիներուն մեջ շնչաղի Ս. Էջմիածնին հառաջարյող փառաց լույսը կենարար:

«ՕՐՀՆԵԱԼ է ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ՀԱՅՐ ՏԵԽԱԾՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՐ ՀԱՅ ԲԱԶՈՒՄ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՒՄ ՄՆԱԻ ԶՄԵԶ ՎԵՐՍՏԻՆ Ի ՅՈՅՍՆ ԿԵՆԴԱՆԻ, Ի ԶԵՐՈՆ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ՄԵՌԵԼՈՅ» (Ա. Պետր., Ա. 3):

Գարուն է այսօր, սիրելի՝ ժողովուրդ:

Զատիկ է այսօր, սիրելի՝ ժողովուրդ:

Եվ խաղաղ է մեր աշխարհը, սիրելի՝ Ազգ իմ հայոց: Եվ ի՞նչ լավ է, ինչ- բա՞ն մխիրարական, որ զարու է, և Զատիկ և խաղաղորյուն, և մենք մեր Հայրենի հողին վրա կապրիեմ՝ ապահով ու անվրդով: Միրելի՛ք, երազ չէ, և ո՞ ալ պատրանք, իրա՞վ է որ կապրիեմ մեր Հայրենի հողին վրա՝ ապահով ու անվրդով:

Հայ՝ ժողովուրդ, էր ժամանակ, երբ դուն ալ Քրիստոսի հման խաչդ առած Գողգորա բարձրացար և մահվան դառնուրյունը նաշակեցիր, բայց որովհետև սուտին սահմանները նեղ են և անարդարության օրեր համրված՝ դուն ալ մահվամբ մահը կոխեցիր, շղաներդ փշրեցիր և հոգիդ ազատ բռիչ առավ, և եղբայրական ժողովուրդներու նետ միասին, դուն վերածնար նոր ուժերով, նոր հույսերով, և նոր կյանքով:

Ինչքա՞ն արցունք, ինչքա՞ն արյուն, ինչքա՞ն ավերակ քու Գողգորայի նամբաներուով վրա:

Տե՛ր Աստված, ի՞նչ դժվար եղավ հայուն համար Հայրենիք մը ունենալ այս արկին տակ, և այնուղի խաղաղ ապրիլ ու շինել: Շինել և ստեղծել և կյանքի փառքը երգել ազատ ու անկաշկանդ:

Բայց այդ բոլորը տխուր անցյալ է արդեն: Մեր օրերուն, ամեն զարուն և ամեն հարուրյան ավետի իրենց նետ կրերեն մեզ՝ նաև մեծ ավետիքը մեր ժողովուրդի կենդանուրյան, մեր ժողովուրդի կյանքի նոր ընձյուղումներուն, մեծ ավետիքը մեր վերածնած մայր Հայրենիքի նորանոր նվաճումներուն և հաղ- բանակներուն՝ տեսեսուրյան մեջ, զիտուրյան մեջ, կրուրյան մեջ, արվես- երու մեջ:

Այսուղի, Մայր Հոռի վրա, վերջապես, հայր կշինե, կստեղծե իրեն հա- յար: Կշինե իր հերկայի ու ոսկի ապագայի համար: Այսուղի ոչինչ չի կորավիր, ոչինչ չի պակսիր: Ամեն ինչ կմեկտեղվի, ամեն ինչ կկուտակվի, ամեն ինչ կանչի: Եվ ինչ որ այսուղի կշինվի, այդ կմեն մեզի՝ միայն:

Հայ՝ մարդ, մահավանդ դր' ն, պանուն խոտ հայ մարդ, և դո՛ ն, հայ՝ երի- տասարդ, ո՛ւ որ ալ գտնվիս, դրանու դիմեկդ դեսի բոյի քու պապերուով հազա- րամյա երկիրը դրախտավալյար, որ այսօր հարուրյուն առած՝ արև կխմե: Այսօր հայոց պատմուրյան նոր զարուն է ծաղկած ու բեզ կկանչի: Մի՛ վիատիր, մի՛ տկարանար, մի՛ երկմտիր, մի՛ բափանիր անհույս նախապարհներու վրա: Ամեն հույս այսահեղ է, և միայն այսահեղ: Արդ, սի՛րտ առ, արհացի՛ր և ովստ՝ մեալ հարազատ զավակը հայ ժողովուրդի լուսաշող հավատիքին ու Հայրենի հողին, և արքուն պահակը Ազգիդ սուրբ ավանդներուն և արդար տեներուն:

«ՈՒԽԵՍ ԴԻՌ ԵՒ ԿԱՏԱՐԵՑ ԷՌ»:

Սիրելի՝ հավատացյալներ, դուք, հոգեծին ո՞ղիք մեծ կուսավորշի լուս երազին, անշարժ կանգնած Ձեր նախնյաց հավատքի վեմին վրա և հավատարիմ իշման սրբազն խորհրդին, լո՛յս առեք սուրբ հարուրյան լույսն, լո՛յս առեք Միածնի եպան Ս. Անդանեն, լո՛յս առեք Հայոց աշխարհի պայծառ արևեն և լուսավորեցե՛ք ձեր միտքն ու հոգին, լուսավորեցե՛ք ձեր կյանքի օրերը, լուսավորեցե՛ք ձեր ձեռաց գործերը: Ապրեցե՛ք խաղաղ, ապրեցե՛ք հաշտ ու միաբան, ուրախացուցե՛ք զիրար, օգնեցե՛ք իրարու եղբայրարար, ողջունեցե՛ք զիրար Քրիստոսավանդ սիրով, ի փառ Աստուծո ամենակալին և Եկեղեցվույս Հայաստանյաց, ի պայծառուրյուն ամենայն հայոց Մայր Արռա Ս. էջմիածնի և ի բարօրուրյուն ու ի ծաղկումն մեր հարազատ ժողովրդի՝ իր վերընճյուղած Մայր Հայրենիքին մեջ:

«ՀՈՒՍԱՆՈՐԵԱՅ, ՀՈՒՍԱՆՈՐԵԱՅ», — հայ ժողովուրդ, — «ԶԻ ՀԱՍԵԱԼ է ԼՈՅՍ ՔՈ, ԵՒ ՓԱՌՔ ՏԵԱՌՆ Ի ՎԵՐԱՅ ՔՈ ԾԱԳԵԱՍՑԵՆ» (Խսայի, Կ 1):

Փա՛ռ հրաշափառ հարուրյան ՔՈ, ՏԵ՛Ր:

Փա՛ռ հրաշափառ իշման ՔՈ, ՏԵ՛Ր:

Փա՛ռ հրաշափառ վերածննդյան ՔՈ, Հայրենիք մեր, ո՛վ դուն անման Հայաստան:

Քրիստոսի սուրբ հարուրյան մեծ ավետիսով, հայրապետական բյուր օրինուրյուն Քեզ՝ Եկեղեցի Հայկական և աստվածակառուց Ս. էջմիածին, և Չե՛զ, Եվիրապետական Ս. Արռողեն մեր՝ Կարողիկոսուրյան Մեծի Տաճն Կիլիկիո, Պատրիարքուրյան Ս. Երուսաղեմի և Պատրիարքուրյան Կոստանդնուպոլս, ողջույն և բյուր օրինուրյուն Քեզ՝ վերածնած հարազատ Մայր Հայրենիք և Քեզ՝ համայն հայ ժողովուրդ: Ամեն:

